ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.09.2014թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում: */զեկ. Մ.Ս.Աթոյան/*

2. ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկի քննարկում և հաստատում: */զեկ. Ս. Ա. Առաքելյան/*

3. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատում: */զեկ. Ս. Ա. Առաքելյան/*

4. ԵՊՀ ԻՄ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձաչափերի ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում: */զեկ. Ա. Յ. Դավթյան/*

5. Տեղեկատվություն 2013-2014 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ԻՄ ուսանողների տեղափոխման մասին */զեկ. Ա. Յ. Դավթյան/*

6. Ընթացիկ հարցեր: */զեկ. Մ.Ս.Աթոյան/*

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատումը» հարցի կապակցությամբ գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատման ներկայացված 2014-2015 ուստարվա միասին երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը, որը կազմվել է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, խորհրդակցվել է ԵՊՀ ԻՄ տնօրենի և բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

Արտահայտվեցին –տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, ստորաբաժանման ղեկավարները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ժամանակցույցը՝ առաջարկված փոփոխություններով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցը:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկի քննարկում և հաստատում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա մանրամասն ներկայացնելով տարածաշրջանում և ՀՀ-ում աշխատաշուկայի զարգացման տենդենցները, ԵՊՀ ԻՄ–ի շահակիցների կարծիքները, հիմնավորեց ներկայացվող նախագիծը և առաջարկեց հաստատել այն:

Արտահայտվեցին - Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, Բնական

գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա.Մարգարյանը, ամբիոնի վարիչներ և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ

2. Հաստատել ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկը:

Լսեցին- «Անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նշեց, որ ֆակուլտետների խորհուրդները մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը, ուսանողական խորհուրդը քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումները՝ «Վազգեն Սարգսյանի» անվանական կրթաթոշակ հատկացնել «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Դիաննա Արշակի Քոքորելյանին, «Երկրապահ» անվանական կրթաթոշակ հատկացնել «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Մարտիկի Ճաղարյանին:

Տնտեսագիտության ֆակուլտետի որոշումները՝ «Մոնթե Մելքոնյանի» անվանական կրթաթոշակ հատկացնել «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Ֆլորա Սամվելի Մանուչարյանին, «Շավարշ Մարգարյանի» անվան կրթաթոշակ հատկացնել «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին:

Արտահայտվեցին – Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն.Բ. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը: Նրանք կարևորեցին ԵՊՀ ԻՄ–ում կրթաթոշակի հավակնորդների օբյեկտիվ ընտրությունը, որը կարող է նպաստել ուսանողների շրջանում առողջ մրցակցության խթանմանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

3. Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Արշակի Քոքորեյանին 2014–15 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվության համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

4 Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնակիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Մարտիկի Ճաղարյանին, 2014–15 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Երկրապահ» անվանական կրթաթոշակ՝ բարձր առաջադիմուն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և բարձր հասարակական ակտիվության համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

5. Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի որոշումը «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Ֆլորա Սամվելի Մանուչարյանին 2014–15 ուս.տարվա առաջին կիսամյակում նշանակել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ՝

գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և բարձր հասարակական ակտիվության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

6. Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի որոշումը՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին 2014–15 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմուն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և բարձր հասարակական ակտիվության համար:

Լսեցին- «ԵՊՀ ԻՄ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձաչափերի ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում» հարցի վերաբերյալ Ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա ներկայացրեց նախագիծը, հիմնավորեց և առաջարկեց հաստատել:

Արտահայտվեցին Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, իրավախորհրդատու Ա.Ս. Հովհաննիսյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ.Ա. Զաքարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա.Շ. Մարգարյանը: Ելույթ ունեցողները հիմնավոր համարելով փաստարկները առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ

7. Հաստատել ԵՊՀ ԻՄ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձաչափերն ըստ մասնագիտությունների և կրեդիտների:

Լսեցին «Տեղեկատվություն 2013-2014 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ԻՄ ուսանողների տեղափոխման մասին» հարցի վերաբերյալ ուսումնական

վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը, նա համառոտ ներկայացրեց տեղափոխման արդյունքները:

Արտահայտվեցին- Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա.Մարգարյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին տեղափոխման օբյեկտիվությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

8. Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

Լսեցին

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետը խորհրդի կազմի փոփոխությունների վերաբերյալ հարցը:
2. Կիրառական արվեստների ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների վերաբերյալ հարցը:
3. Բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների վերաբերյալ հարցը:
4. Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների վերաբերյալ հարցը:
5. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչատնտեսական վարչության կանոնակարգի հաստատման վերաբերյալ հարցը :
6. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգի վերաբերյալ հարցը:
7. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի վերաբերյալ հարցը:

8. ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի կանոնակարգի վերաբերյալ հարցը:

9. ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի կանոնակարգի վերաբերյալ հարցը:

10. ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի կանոնակարգի վերաբերյալ հարցը:

11. ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի «Գծանկարի, գունանկարի և քանդակի » ամբիոնի կանոնակարգի վերաբերյալ հարցը:

12. ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի » ամբիոնի կանոնակարգի վերաբերյալ հարցը:

Արտահայտվեցին – գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, իրավախորհրդատու ԱԿԲ բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

9. Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ

10. Հաստատել Կիրառական արվեստների ֆակուլտետի խորհրդի կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ

11. Հաստատել Բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ

12. Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ

13. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչատնտեսական վարչության կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

14. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

15. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

16. Հաստատել ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

17. Հաստատել ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

18. Հաստատել ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

19. Հաստատել ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ

20. Հաստատել ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի կանոնակարգը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ա.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

17.09.2014թ.